Ժ.

Հայոց մէջ այս խնդիրը իւր զարգացման յատուկ ուղին ունի, կապուած եկեղեցու ընթացքի և դաւանաբանական որոշ հայեացքի հետ. բայց ինչպէս բիւզանդական և արևմտեան եկեղեցիների մէջ, այնպէս էլ Հայոց՝ այս հարցում ծագման նախահայրենիքը Երուսաղէմն է և ապա Ասորիքը մինչև Ը. դարը։ Մեր վիմական, նախնական պատկերագրութեան մէջ՝ Ե–Է. դարերում, երևան չի գալիս ոչ մի տեղ խաչելութեան, ևս առաւել յետագայ իրողութիւնների՝ խաչից իջեցնելու և թաղման տեսարանները, թէև բոլորովին հազուագիւտ չեն տէրունական, սրբոց և նոյն իսկ կենցաղական քանդակներ, գերեզմանական կոթողների և եկեղեցիների պատերի վերայ։ Խաչի քանդակն այլ և այլ պէսպէսութիւններով յայտարարն է քրիստոնէութեան և նորա խաչեցեալ հիմնադրի անձնաւորութեան. այդպիսի մի օրինակ տեսանք վերև Մաստարայի կոթողի վերայ. չեն պակասում Դ–Զ. դարերում պսակի մէջ առնուած հաւասարակող խաչերի և երկու կողմից աղաւնիների խմբակցութիւնը, որ նոյն գաղափարի արտայայտութիւնն է։

Վեցերորդ դարի վերջերում յիշւում է «զմարմնացեալոյն Աստուծոյ զպատկերն», բայց չկայ որևէ ցուցում, թէ դորա մէջ նաև խաչելութեան պատկերը պիտի հասկանալ[1]. խաչելութեան և թաղման պատկերագրութեան եզակի յիշատակութիւն կայ միայն Վրթանէս Բերթոզի «Յաղագս պատկերամարտից» գրութեան մէջ[2]։ Օձնեցին ևս իւր Պաւղիկեանց Ճառի մէջ պաշտպանում է միայն փրկչական պատկերի և խաչի պաշտամունքը. «մեք զմիայնոյ միածնի որդւոյն ոչ պաշտեմք զպատկեր եւ զնշան յաղթութեան», «կռեմք, կոփեմք և քանդակեմք և քերեմք . . . զեկեղեցիս, զսեղանս, զխաչս, զպատկերս», կամ «զկենդանին և զկենդանացուցիչն քո՝ յամենայն նիւթս մարդակերպ նմանութեամբ նկարագրեմք», բայց յարգանքի առարկան քարեղէն կամ ոսկեղէն նիւթը չէ. սրանց երկրպագելով «ոչ յերկուանամ նմին ինքեան բազմելոյն ի նոսա Քրիստոսի զերկրպագութին մատուցանել, ոչ հայելով յերեւելին առաւել, քան զանտեսանելին ի նմա զանձեալ ընդ միտ ածելով»[1]։

Դեւոնդ ևս յիշում է արաբացիների կողմից «զկենդանագրեալ պատկերս ճշմարիտ մարդեղութեան Տեառն մերոյ և Փրկչին և Նորին աշակերտացն» կամ «և զնմանութիւն պայծառացեալ խաչին Քրիստոսի» խորտակելու մասին, Ը. դարի առաջին քառորդին և յետոյ[2]։ Այս ցուցումների մէջ ամենաշատը կարելի է ենթադրել խաչի հետ թերևս և խաչելութեան գոյութիւնը, բայց ոչ երբեք խաչից իջեցնելու և թաղման պատկերների, որ ինչպէս տեսանք արևելեան միւս եկեղեցիների մէջ էլ աւելի վաղագոյն շրջանների համար տեղեկութիւն չունինք։

Ութերորդ և իններորդ դարերը, արաբական տիրապետութեան ուժեղ ժամանակները, աննպաստ էին Հայոց մէջ ֆիգուրատիւ արուեստի զարգացման և տարածման համար, և յիրաւի, Սիւնեաց աթոռի հետ կապուած Ը. Թ. և Ժ. դարերի խաչի սրբութիւններից ոչ մէկը այդպիսի բնոյթ չունէր, ինչպէս պարզ տեսնել կարելի է Օրբէլեանի խաչերի յաճախ կրկնած նկարագրութիւններից[3]։ Տաթևի և Գնդեվանքի որմանկարչութեան բովանդակութեան մասին Ժ. դարում մեր տեղեկութիւնները սուղ են, իսկ Դաւիթ Վասպուրականցու Աղթամարը, որ Հայաստանի համար բացառիկ կերպով այնքան հարուստ հին և նոր կտակարանի և սրբոց հետ կապուած քանդակներով, չունի մեր նիւթին վերաբերեալ պատկեր։ Հայ եկեղեցին խաչելութիւնից, բայց մանաւանդ խաչից իջեցնելու և թաղման պատկերաւորութիւնից աւելի չեշտել է այս շրջանում և պաշտաման ու արուես-

(1) Կաղանկատուացի. հրատ. Շահնազարեանցի. Փարիզ. 404։

(2) Տաշեան. Յուցակ Վիեննայի Մխիթ.

(1) Յովհաննու Իմաստասիրի մատենագրութիւնք. Վենետիկ. 1893. 35. 39. 40. 42։

(2) Եզեանի հրատ. Սպ. 1887. 100. 152։ Համ. Ասողիկ. Շահնազարեանցի հրատ. 130։

(3) Պատմ. Նահանգին Սիսական. Թիֆլիս. 1911. 203. 215. 219. 231. 304. 319։